ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

05.04.2024 Սևան համայնք

2024թ.-ի մարտի 27-ին, ժամը 12:00-ին <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով (երրորդ լսում) Գեղարքունիքի մարզի Սևան խոշորացված համայնքի համայնքապետարանի շենքում տեղի է ունեցել <<ԴԻՋԻԴԱԹԱ>> ՓԲ ընկերության կողմից նախատեսվող արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երրորդ հանրային քննարկումը:

Ելույթ ունեցան՝

Բացման խոսքով հանդես եկավ համայնքի ղեկավարի կողմից լիազորված անձը՝ Հայկ Ղուկասյանը:

Շահագործման նախագծի բովանդակային և տեխնիկական մասը ներկայացրեց ընկերության ներկայացուցիչ՝ Մերի Ղազարյանը:

Նախագծի բնապահպանական և իրավանորմատիվային մասը ներկայացրեց «Էկո Մենեջմենթ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Տարոն Նավասարդյանը:

Հաշվետվությունում համաձայն օրենքի 16-րդ 18-րդ հոդվածների ներկայացված են տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, ինչպես նաև նախնական բնապահպանական միջոցառումները, որոնք ուղղված են մեղմելու, նվազեցնելու և կանխարգելելու հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա:

Դիտողություններ և առաջարկություններ

Լսման մասնակիցները քննարկեցին և առաջարկեցին մինչ հաջորդ հանրային լսումը Գագարինի վարչական ղեկավարի հետ համատեղ քննարկել սոցիալական օժանդակության ծավալները և թիրախային կետերը:

Տեղակետին համաձայնություն հայտնեց նախաձեռնող կազմակերպության ղեկավար Վահե Խաչակոսյանը:

Հանրային լսումների արդյունքում մասնակիցները որոշեցին՝

- չառարկել նախատեսվող գործունեության իրականացմանը:

Ինարկումների պատասխանատու՝ Հայկ Ղուկասյան

Ներկայացուցիչ՝ «ԴԻՋԻԴԱԹԱ» ՓԲԸ-ի տնօրեն

ДИДЖИДАТА
"DIGIDATA"
08600472
1